

~~1233698~~

Петросян

796

7-50

Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՆ



ԳՅՈՒՂՆՐԱՏ 1935 ՅԵՐԵՎԱՆ

02 NOV 2010

Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

796
7-50

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՆ ԴԵՊՏ ԳՅՈՒՂ

39-8369 5



19 JUL 2013

9292

«Մենք պե՛տք ենք անցնենք առողջ լինել կենսա-
բալս բանվորների մի նոր սերունդ, վորն բնորո-
նակ լինի բարձրացնելու հորհրդային յերկրի
հզորությունն ու իր կրճավ պատկանելու
այն՝ բենամու հարձակումից»:

ՍՏԱԼԻՆ

Дублетный фонд
госуд. библиотеки
им. В. И. Ленина

35-80357



4598-84

Խորհրդային իշխանութիւնն իր հաղթանակի առաջին
խօսք որից մարտի կուլտուրան՝ բանվորի և գյուղացու
ֆիզիկական պատրաստութիւնն իր կարևորագույն խնդիր-
ներից մեկը համարեց: Միայն ֆիզիկապես առողջ մարդն
է, վոր կարող է լավ աշխատել, աշխատանքի մեծ արտա-
դրողականութիւն ստեղծել, իր աշխատանքից լավ ոգտվել
և պաշտպանել խորհրդային հայրենիքը թշնամիներից:

Ֆիզկուլտուրայի ոգտավետութիւնը միանգամայն
ակներև է. այսպես, որինակ՝ Իվանով-Վոդնեսենսկու յերի-
տասարդ մանածագործների մեջ կատարած հետազոտութիւ-
նից պարզվել է, վոր ֆիզկուլտուրայի շարքերը նոր ընդ-
գրկված 100-ից 33-ն սկսվող թոքախտի նշաններ են ունե-
ցել, և նրանց ֆիզկուլտուրայով պարապելը կարճ ժամա-
նակամիջոցում հիվանդութիւնը 11 0/0-ով նվազեցրել է:

Ալլահվերդու Լենհանքերում գործող ֆիզկուլտուրայի
անվան դպրոց, վոր ամբողջութամբ բաղկացած է ֆիզ-
կուլտուրնիկներից, իր ամսական պլանը միշտ 130—150
տոկոսով է կատարում, իսկ նրա կողքին աշխատող և ֆիզ-
կուլտուրայով չպարապող բրդագնների արտադրողականու-
թիւնն ավելի քիչ է (տեղեկութիւնները վերցված են
Ալլահվերդու Լենհանքերի ֆի բյուրոյից և հանքկոմից):

Յերևանի Պետական Բժշկական Ինստիտուտի ֆիզկուլ-
տուրայի բյուրոն ֆիզկուլտ-դասատու Գ. Մինասյանի գլխա-

վորութեամբ մի փոքրիկ հետազոտութիւնն է կատարել. նա վերցրել է ֆիզիկոսութեան պարապոզ և չպարապոզ ուսանողութեան յերկու խումբ, և յերեք ամսից հետո, յերբ հաշվի յե առել այդ յերկու խումբ ուսանողութեան ակադեմիական առաջադիմութիւնը, պարզվել է, վոր ֆիզիկոսութեան պարապոզներն առաջին յեռամսյակի վերջում ստացել են լավ գնահատականներ ու վոչ մի հիվանդութիւն չեն ունեցել (դասերից չեն բացակայել) և, ընդհակառակն, ֆիզիկոսութեան պարապոզ խմբում բացակայութիւններ շատ են յեղել, և առաջադիմութիւնն ավելի ցածր աստիճանի վրա յե յեղել: Սրա բազմաթիվ փաստերն ապացուցում են, վոր, իրոք՝ ֆիզիկական ամուր, կոստութեան բարձր սերունդ ունենալու համար ֆիզիկոսութեան լավագույն միջոցն է: Խորհուրդներ իշխանութիւնը վոչ մի ջանք չի խնայում՝ ֆիզիկոսութեան մեր յերկրում զարգացնելու գործում—անա թե ինչու ֆիզիկոսութեան այժմ թափանցել է մեր արտադրութեան մեջ, դպրոցը, ուսումնական բարձր հիմնարկներն ու սոցիալիստական գյուղը:

«Հայաստանում 'չպե՛տ է դուրս մնա ֆիզիկոսութեան շարժումից վոչ մի յերիստադր բանվոր ու կոլսնեստական»:

Ա. ԽԱՆՁՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՆ ՎՈՂՁ ԽՍՀՄ-Ի ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԱՆԲԱԺԱՆ ՄԱՍՆ Ե

Խորհրդային Հայաստանի ֆիզիկոսութեան կազմակերպութիւնն իր կազմակերպման 11 տարվա ընթացքում մեծ հաջողութիւններ կարողացավ ձեռք բերել: Ամենուրեք՝ քաղաքում և գյուղում՝ նորանոր ֆիզիկոս-խմբակներ, ֆիզիկոս-հրապարակներ կազմակերպվեցին, տեղական նոր կազմեր առաջ յեկան:

Հայաստանի ֆիզիկոս-կազմակերպութիւնը Հայկում-կուսի Կենտկոմի ու ընկ. Խանջյանի անմիջական ղեկավարութեամբ այսօր մեր մեծ Միութեան ֆիզիկոս-կազմակերպութեան առաջավոր ջոկատներից մեկն է հանդիսանում, վոր իր ձեռքում է պահում ԽՍՀՄ-ի ՖԻ Գերխորհրդի կարմիր դրոշը:

Ֆիզիկոսութեան շարժումն այժմ այնպիսի ծավալ է ստացել, վոր դաշնակցական Հայաստանը յերազել անգամ չէր կարող:

Ահա մի պատկեր Հայաստանի ֆիզիկոս-կազմակերպութեան աճման մասին՝ սկսած 1925 թ. մինչեւ 1934 թ.

Տարի	Խմբակների թիվը	Կազմակերպության թիվը
1925	83	2782
1926	93	2903
1927	105	4360
1928	125	5231
1929	132	6285
1930	205	11426
1931	239	22625
1932	307	25948
1933	295	40312
1934	—	61000

Ծանոթություն.—1. Տեղեկությունները վերցված են 25 թվից, վորովհետև տեխնիկական մի շարք անհարմարությունների պատճառով հնարավոր չէր հշտել 1923—24 թ. թ. աճը:

2. Կազմակերպության աճը 1931 թ. սկսում է ուժեղ կերպով ավելանալ: Այդ կատարվում է շնորհիվ «ՊԱՊ» կրճառանի, վոր, վորպես Խորհրդային ֆիզկուլտուրայի սխտեմ, սկսեց գործածության մեջ դրվել 1931 թվից:

3. 1934 թ. խմբակների թիվը, հաշվառման բացակայության պատճառով, չի տրված, սակայն նախնական տվյալներով այն հասնում է մինչև 500-ի:

Կարճ ժամանակում Հայաստանում առաջ է անցել նաև սպորտի զանազան ձևերի զարգացումը: Միայն վերջին յերեք տարում 159 մեծ սպորտ մրցում է կազմակերպվել՝ Հայաստանյան, Անդրկովկասյան և Համամիութենական մասշտաբով: Այդ մրցումներին մասնակցել են 17254 լավագույն ֆիզկուլտուրիկ:

Մրցումներն իրենց դրական հետևանքն են ունեցել: Խորհրդային Հայաստանը, շնորհիվ մեր կուսակցության լենինյան ազգային ճիշտ քաղաքականության, կիրառելով «հասնել բուրժուական բոլոր ուկորդներին և առաջ անցնել» լոզունգը՝ 1934 թ. ընթացքում իր խնդուրույն ուկորդներն ստեղծեց՝ սահմանելով 122 Հայաստանյան, 52 Անդրկովկասյան, 10 համամիութենական և մեկ համաշխարհային նոր ուկորդ:

Այս բոլոր հաջողությունների հիմք հանդիսացավ խորհրդային ֆիզկուլտուրայի հիմնական սխտեմ «Պատրաստ աշխատանքի և պաշտպանության» կրճառանի կոմպլեքսը, վոր բազմահազար աշխատավորություն ընդգրկեց:

«ՊԱՊ»-ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ԿՈՄՊԼԵՔՍԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԻՍՏԵՄՆ Ե

Անշեղորեն կենսագործելով Համ. Կ (բ) Կ կենսակոմի 1929 թ. պատմական վորոշումը՝ ֆիզկուլտուրայի խորհուրդները պետական կենտրոնացած մարմին դարձնելու վերաբերյալ՝ մեր ֆիզկուլտ-կազմակերպություններն այնպիսի մի սխտեմ են մշակել, վորն իր բովանդակությամբ ֆիզիկական պատրաստականության վործը կապել է մեր առտադրության ու գյուղատնտեսության զարգացման խնդիրներին հետ—մեզ մոտ հիմա պահանջվում է, վոր ֆիզկուլտուրիկը լինի հարվածային, իմանա միջազգային սպորտշարժման խնդիրները, խելացիորեն կազմակերպել իր կուլտուրական հանգիստը, պաշարի խորհրդային սպորտի բարձր ցուցանիշների համար, դառնա աշխատանքի և պաշտպանության լավագույն մարտիկը:

Այս սխտեմը «Պատրաստ աշխատանքի լավ պատրաստում» կրճառանի կոմպլեքսն է: «ՊԱՊ» կոմպլեքսը

լեքսը մարմնավորում է այն ամենը, ինչ հարկավոր է մեր
յերկրի ֆիզիկական առողջ, գաղափարապես զգոն և կուլ-
տուրական նոր մարդ պատրաստելու համար: Մեր խոր-
հրդային ֆիզկուլտուրայի սխտեմը բաժանվում է յերեք
կոմպլեքսի՝ ա) «ՊԱՊ» 1-ին աստիճանի, բ) «ՊԱՊ» 2-րդ աս-
տիճանի և գ) «ՅԵ. ՊԱՊ» կոմպլեքս: «ՊԱՊ» 1-ին կոմպլեքսը
մեր մասսաներին ամենամատչելի կոմպլեքսն է և բաղկա-
ցած է այնպիսի նորմաներից, վոր խորհրդային ամեն մի
քաղաքացի ֆիզկուլտուրայով պարապելով՝ կարճ ժամա-
նակում հեշտությամբ կարող է կոմպլեքսի նորմաներից
քննություն տալ: Այսպես անելու պատճառն այն է, վոր
ֆիզկուլտուրան լայն մասսաներ ընդգրկի, վորտեղ նրանք
տալիս են աշխատանքի և յերկրի պաշտպանության 1-ին
քննությունը:


1-ին կոմպլեքսն իրոք դարձավ մասսայական. այս
աբտահայտվում է նրանով, վոր այսօր այդ կոմպլեքսից
քննություն տալու գործում Միության մեջ ընդգրկվել է
մոտ 6 միլիոն աշխատավոր: «ՊԱՊ» 1-ին կոմպլեքսն իր
լայն մասսայականացումը գտավ նաև Հայաստանի ֆիզկուլտ-
կազմակերպության մեջ, ու նրա պլանների կատարումը
Հայաստանի աշխատավորության առորյա պայքարի խըն-
դիրը դարձավ: Այսպես, որինակ, 31—32—33 թ. Հայաս-
տանին պլան էր տրված՝ ընդգրկել 59150 հոգի և լրիվ
քննություն տալ 16286 հոգի, սակայն այդ թիվը գերա-
կատարվեց—ընդգրկվեց 61440 հոգի և լրիվ քննություն
տվեց 22268 հոգի: 34 թ. պլան էր տրված՝ ընդգրկել
19000 հոգի և լրիվ քննություն տալ՝ 9000 հոգի: Այս
պլանը ևս գերակատարվեց հետևյալ կերպ՝ ընդգրկվեց
24000 հոգի և լրիվ քննություն տվեց 16000 հոգի:

Ինչպես տեսնում ենք, խորհրդային ֆիզկուլտուրայի
սխտեմին տիրապետելու պայքարը մեզ մոտ տարեց-

Մինչեւ 1935 թ. հունվարի 1-ը սրված ՊՍՊ-ի առաջին աստիճանի նորմաները համարվում են իսկական յեվ կրկին չափ պարսաղիր չե
Մինչեւ 1935 թ. հունվարի 1-ը չսրված նորմաներն անպայման պետք է սրվեն բարձրացված նորմաների աղյուսակի հիման վրա

№ համար	Քննարկ	Տ Ղ Ա Մ Բ Դ Ի Կ						Կ Ա Ն Ա Յ Ք Ք					
		18—25 տարեկան		25—35 տարեկան		35 տար. բարձր		17—25 տարեկան		25 —32 տարեկան		32 տար. բարձր	
		Նոր նորմաներ	Հին նորմաներ	Նոր նորմաներ	Հին նորմաներ	Նոր նորմաներ	Հին նորմաներ	Նոր նորմաներ	Հին նորմաներ	Նոր նորմաներ	Հին նորմաներ	Նոր նորմաներ	Հին նորմաներ
1	Վազք 100 մետրի վրա	13,5 վ.	14,5 վ.	14,0 վ.	15,0 վ.	15,0 վ.	16,0 վ.	15,0 վ.	16,0 վ.	16,0 վ.	17,0 վ.	17,0 վ.	18,0 վ.
2	Վազք 500 մետրի վրա	—	—	—	—	—	—	1 ր. 50 վ.	2 ր. 00 վ.	2 ր. 00 վ.	2 ր. 10 վ.	2 ր. 10 վ.	2 ր. 10 վ.
	Վազք 1000 մետրի վրա՝ հրապարակում, կամ	3 ր. 10 վ.	3 ր. 30 վ.	3 ր. 15 վ.	3 ր. 40 վ.	3 ր. 30 վ.	3 ր. 50 վ.	—	—	—	—	—	—
	վազք 1000 » » վայրում	3 ր. 30 վ.	3 » 50 »	3 » 40 »	4 » 00 »	3 » 50 »	4 » 10 »	—	—	—	—	—	—
3	Ցատկումներ յերկարությամբ՝ թափ առնելով	4 մ. 50 ս.	4 մ. 00 ս.	4 մ. 25 ս.	3 մ. 80 ս.	4 մ. 00 ս.	3 մ. 50 ս.	3 մ. 50 ս.	3 մ. 00 ս.	3 մ. 25 ս.	2 մ. 30 ս.	3 մ. 00 ս.	2 մ. 50 ս.
4	» բարձրությամբ՝ » առնելով	1 մ. 25 ս.	1 » 20 »	1 » 20 »	1 » 15 »	1 » 15 »	1 մ. 10 ս.	1 » 05 »	0 » 90 »	1 » 00 »	0,80 ս.	0,90 ս.	0,70 ս.
5	700 գրամ ծանրության նախակի նետում հետազոտության վրա և 1914 թ. ձեռքի նախակի կազմության ու մարտական հատկութիւնների գիտնալը	37 մ.	35 մ.	35 մ.	35 մ.	30 մ.	30 մ.	25 մ.	25 մ.	23 մ.	25 մ.	20 մ.	20 մ.
6	Պատահողի վրա ձգում պրեզնտով 6 անգամ՝ 18—25, 25—35 տար., իսկ 35 տարեկանից բարձր՝ 6 անգամ, առանց պրեզնտի	—	—	—	—	—	—	5 մ.	3 մ.	3,5 մ.	2 մ.	2 մ.	2 մ.
6 ա	Գերանից կախվելը, պարանի կամ ձողի վրայով մոլորակելը . .	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
7	32 կիլոգրամանոց փամփուշտի արկղը գետնից ուսին բարձրաց- նելը և առանց կանգ առնելու նրանով շարժվելը 100 մ վրա (յեղել է 90 մետր)	4 անգամ	4 անգամ	4 անգամ	4 անգամ	4 անգամ	4 անգամ	—	—	—	—	—	—
8 ա	Լող՝ 100 մետրի վրա	2 ր. 20 վ.	2 ր. 20 վ.	2 ր. 30 վ.	2 ր. 30 վ.	2 ր. 40 վ.	2 ր. 40 վ.	2 ր. 40 վ.	2 ր. 40 վ.	2 ր. 50 վ.	2 ր. 50 վ.	3 րոպե	3 րոպե
9	» » » մամուռ կի, հլաչանով, կամ նռնակով	100 մ.	100 մ.	100 մ.	100 մ.	100մ.	100 մ.	25 մ.	25 մ.	25 մ.	25 մ.	25 մ.	25 մ.
10	Ցատկում ջրի մեջ՝ 3 մետր բարձրությունից	Պ Ա	Բ Տ	Ա Ա	Դ Ի	Բ Ե	Բ Բ	Ո Ո	Լ Ո	Բ Ի	Հ Ա	Ա Մ	Ա Բ
11	Հեծանիվ՝ 10 կմ խճուղով և սովորական ճանապարհով (հեծա- նիվը կարելի չէ փոխարինել արակատորով, ավտոյով, մո- տոցիկետով և այլն), յեթե կարող են գեկավարել)	30 ր.	40 ր.	30 ր.	40 ր.	35 ր.	45 ր.	35 ր.	50 ր.	35 ր.	50 ր.	40 ր.	55 ր.
12	Թիավարում 1 կմ վրա	Պ Ա	Բ Տ	Ա Ա	Դ Ի	Բ Ե	Բ Բ	Ո Ո	Լ Ո	Բ Ի	Հ Ա	Ա Մ	Ա Բ
13	Դահուկներ խորզուրորդ վայրում. աղամարդկանց 10 կմ, կա- նանց՝ 3 կմ	1 ժ. 05 ր.	1 ժ. 15 ր.	1 ժ. 10 ր.	1 ժ. 20 ր.	1 ժ. 20 ր.	1 ժ. 25 ր.	20 ր.	24 ր.	22 ր.	26 ր.	25 ր.	28 ր.
	Հարավային շրջաններում դահուկները փոխարինում են ձիա- վարությամբ կամ ուղամարշավով, աղամարդկանց՝ 15 կմ վրա, կանանց՝ 5 կմ վրա	2 ժամ	8 ժ. 20 ր.	2 ժ. 30 ր.	3 ժամ	2 ժ. 50 ր.	3 ժամ	1 ժամ	1 ժ. 15 ր.	1 ժ. 10 ր.	1 ժ. 15 ր.	1 ժ. 15 ր.	1 ժ. 15 ր.
	Սարից դահուկներով ցած իջնելը	Պ Ա	Բ Տ	Ա Ա	Դ Ի	Բ Ե	Բ Բ	Ո Ո	Լ Ո	Բ Ի	Հ Ա	Ա Մ	Ա Բ
41	Ամենորյա մարմնամարզական վարժություններ	»	»	»	»	»	»	»	»	»	»	»	»
15	Հակազդով շարժվելը մեկ կիլոմետրի վրա. հակաքիմիական պաշտպանության հիմունքները գիտնալը	»	»	»	»	»	»	»	»	»	»	»	»

տարի կրկնապատկվում է: Այս հանգամանքը հնաբավորություն տվեց սպորտ-տեխնիկական զգալի ցուցանիշներ ձեռք բերել: Ֆիզկուլտուրայի Համամիութենական Գերագույն Խորհուրդն առաջին աստիճանի կոմպլեքսի նորմա-



Նկ. 1. Մի խումբ ֆիզկուլտուրնիկ կուլսնեստուհի պարապմունքի ժամին.

ների մեջ 1934 թ. մեծ փոփոխություններ մտցրեց՝ բարձրացնելով այդ նորմաներից քննություն տալու վորոշ ցուցանիշներ:

Ստորև տալիս ենք հին և փոփոխված նորմաների տախտակը:

(Տախտակը տես նոր էջից)

16-ԻՑ ՄԻՆՁԵՎ 22 ՆՈՐՄԱՆԵՐԸ ԲՈԼՈՐ ՀԱՍԱԿԻ ՏՂԱՍԱՐԴ-
ԿԱՆՑ ՅԵՎ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ԵՆ

16. Ռազմա-քաղաքական ընդհանուր տեղեկություններ և կովի տեխնիկական միջոցների գիտություն, գիտելիքներ և սովորություններ՝ շարքի, վայրին հարմարվելու ու քողարկվելու, ձեռնամարտի ու տեղադրություն վերաբերյալ 5).

17. հրաձգության և 1891 թ. հրացանի գիտություն 6).

18. առաջին ոգնություն՝ դժբախտ դեպքերի, անակընկալ հիվանդությունների ժամանակ և փոխադարձ ոգնություն՝ մարտում.

19. ֆիզկուլտ-ինքնստուգման հիմունքների գիտություն.

20. ֆիզկուլտ-շարժման և ԿՍԻ գործունեություն հիմունքներին ծանոթանալը.

21. սանմիսիմումի կատարում.

22. հարվածայնությունն արտադրության, ձեռնարկության, հիմնարկության մեջ և հասարակական աշխատանքում:

Ծանոթություն.— 1. Մեծահասակներին իրավունք և տրվում № № 1, 2 նորմաներից մեկն ու մեկը փոխարինել չմուշկների քննություններով՝ հետևյալ նորմաներով.

Տղամարդկանց համար 25-ից 35 տարեկան, 35-ից բարձր՝ հասարակ չմուշկներ՝ 500 մետր 1 ր. 20 վ., 1 ր. 25 վ. կամ վազելու չմուշկներ՝ 1000 մ 2 » 20 », 2 » 30 »

Կանանց համար՝ 25-ից 30 տարեկան, 32 տար. բարձր հասարակ չմուշկներ՝ 200 մետր 40 վայրկ., 45 վայրկյան կամ վազելու չմուշկներ՝ 500 մ 1 ր. 35 վ., 1 ր. 45 վ.

1. Կոմպլեքսի մեջ մտնող նորմաների տեսակներից մեկը կարող է փոխարինվել հետևյալ սպորտ-խաղերից մեկին մասնակցելով, այն է՝ տենիսով, ֆուտբոլով, բասկետբոլով, վալեյբոլով.

2. միությունական և ինքնավար հանրապետությունների ՖԿԳ խորհուրդներին, ինչպես և յերկրային ու մարգային ՖԿ խորհուրդներին իրավունք է տրվում ժամանակավորապես հետաձգել հեծանվից քննություններ տալը, յեթե հեծանվի չկա, և առանձին դեպքում չպետք է դադարեցնել դրան փոխարինող քննությունները (մոտոցով, ավտոմոբիլով, տրակտորով և այլն), ինչպես և մյուս բոլոր քննությունները տվողներին կրճառանշաններ տալը.


3. ժամանակի նորմաները սահմանում են հանրապետական (մարգային յերկրային) ՖԿ գերխորհուրդները՝ նայած տեղի պայմաններին (նավակի տիպին, գետի հոսանքին, ծովին և այլն).

4. ընդհանուր ռազմական գրագիտությունը հաստատող քննություններին յենթարկվում են ՊԱՊ-ի կրճառանշանի քննություն տվածները, բացի այն անձնավորություններից, վորոնք ԲԳԿԲ-ում կամ ՊԱՁԸ-Ա.վիաքիմում վերջին 4 տարվա ընթացքում սխտեմատիկ ռազմական պատրաստականություն են ստացել, կամ վերապատրաստվել են: Կանայք ձեռնամարտի քննություններից ազատվում են.

5. գործնական հրաձգությունից (հրաձգային 3-րդ կարգի կլասիֆիկացիայի միսիմում) միմիայն ազատվում են այն անձնավորությունները, վոր տվյալ տարվա հրաձգությունների լիակատար քննություն են տվել և ստացել են սնայպերի կոչում, կամ ՊԱՁԸ-Ա.վիաքիմի «Վորոշիլովյան հրաձիգ»-ի կրճառանշան ունեն.

6. 8, 8-ա և 9-ը կետերով (լող) պետք է տրվեն բոլոր 3 նորմաները (առանց մեկ նորման մյուսով փոխարինելու):

Բոլորովին այլ պատկեր է ներկայացնում «Յեղի'ր պա-
րաս աւիասանքի յեվ պաշտպանութեան» մանկական
կոմպլեքսը: Այս կոմպլեքսը լրացնում են մինչև 17 տարեկան



Նկ. 2. Կոլմսեստակաւն Գիգիւլ-
սուրնիք նունակ նեսելիս
(Մեղրի):

հասակ ունեցող մանուկ-
ներն ու պատանիները,
և լրացնողներն ստանում
են կրծքանշան, վոր հի-
շեցնում է 1-ին կոմպլեք-
սը: Մանուկներն իրենց
կոմպլեքսը լրացնելուց
հետո յե, վոր «ՊԱՊ»-ի
առաջին կոմպլեքսից
քննութիւն պետք է տան,
վորովհետեւ մանկական
կոմպլեքսը նախապատ-
րաստում է մանուկներին

1-ին կոմպլեքսից քննութիւն տալու: Ստորեւ տալիս ենք
«Յե. ՊԱՊ»-ի կրծքանշանի նորմաների տախտակը:

**«ՅԵՂԻՐ ՊԱՏՐԱՍԱՍ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ»
ՄԱՆԿԱԿԱՆ ՖԻԶԿՈՒԼՏ-ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ**

№ ՆՈՐՄԱՆԵՐԸ	13—14 տարեկան	15—16 տարեկան
1. Վազք	Տղաները՝ 60 մետր 9 վ. Աղջիկները՝ 60 մետր 10 վ.	Տղաները՝ 100 մ. 14,5 վ. Աղջիկները՝ 100 մ. 16 վ. Տղաները՝ 1000 մետր 3 ր. 40 վ. Աղջիկները՝ 500 մետր 2 ր. 10 վ.
2. Դանուկ- ներ	Բայլք չափավոր, կտրուկ վայրով Տղաները՝ 3 կմ 22 ր. Աղջիկները՝ 2 կմ 18 ր.	Բայլք կտրուկ վայրով Տղաները՝ 5 կմ 38 ր. Աղջիկները՝ 3 կմ 26 ր.
3. Ցատկում բոս բարձրու- թյան վազքով	Տղաները՝ 110 սանտ. Աղջիկները՝ 95 սանտ.	Տղաները՝ 115 սմ Աղջիկները՝ 110 սմ
4. Ցատկում բոս յերկա- րութեան վազքով	Տղաները՝ 3 մետր 30 սմ Աղջիկները՝ 2 մետր 80 սմ	Տղաները՝ 4 մետր Աղջիկները՝ 3 մետր 10 սմ

№ ՆՈՐՄԱՆԵՐԸ	13—14 տարեկան	15—16 տարեկան
5. Ձգում և ճաղցում	Մագլցում ուղղահայաց պարանի, ձողի, կամ հարթ ծառի վրա, վռաքերի ոգնութեամբ՝ Տղաները՝ 5 մետր Աղջիկները՝ 2 մետր Ձգում կախից, ափերն առաջից Տղաները՝ 3 անգամ	Մագլցում ուղղահայաց պարանի, ձողի կամ հարթ ծառի վրա, վռաքերի ոգնութեամբ. Աղջիկները՝ 2 մետր 50 սմ Ձգում կախից, ափերն առաջից Տղաները՝ 4 անգամ
6. Հափասա- րակչուկ- թյուն	Բայլք գերանի վրա (4 մետր) ծանրաբեռնված Տղաները՝ 120 սմ բարձրութ. 5 կգ բեռով Աղջիկները՝ 110 սմ բարձրութ. 3 կգ բեռով Յեղրափակիչ ցատկում՝ առանց բեռի	Բայլք գերանի վրա (4 մետր) ծանրաբեռնված Տղաները՝ 150 սմ բարձրութ. 5 կգ բեռով Աղջիկները՝ 120 սմ բարձրութ. 3 կգ բեռով Յեղրափակիչ ցատկում՝ առանց բեռի
7. Ծանրու- թյան բարձ- րացում և տե- ղափոխում	Փամփուշտարկի կամ 10 կգ ծանրութիւն ունեցող ավազով լցված պարկի տեղափոխում 25 մետր տարածութեան վրա՝ տղա- ները, իսկ աղջիկները նույն տա- րածութիւնն 8 կգ ծանրութեամբ	Աղջիկները պետք է կարողանան 2 հոգով տեղափոխել իրենց քաշի «վերափոր», ցանկացած ձևով, 20 մետր տարածութեան: Տղաները՝ բարձրացնել և 50 մետր տարածութեան փոխադրել 16 կգ ծանրութիւն ունեցող փամ- փուշտարկ (ժամկետ չի տրվում)
8. Նետում	Նետելը 500 դրամ նոսակի Տղաները՝ 25 մետր Աղջիկները՝ 14 մետր	Նետելը 700 դրամ նոսակի Տղաները՝ 30 մետր Աղջիկները՝ 20 մետր
9. Հակազազ	Անցնել հակազազով 500 մետր տարածութիւն, կարողանալ պատմել հակազազի «Հառուց- վածքի մասին, դործնականում ցույց տալ հակազազը խնամե- լու կանոնները:	Անցնել հակազազով 800 մետր տարածութիւն, կարողանալ պատմել հակազազի կառուց- վածքի մասին, դործնականում ցույց տալ հակազազը խնամե- լու կանոնները:
10. Մարմնա- մարզական կոմպլեքս	Կարողանալ կատարել մարմնա- մարզական ազատ վարժութիւն- ների հատուկ կոմպլեքսը. իմա- նալ և կատարել առավոտյան լիցքային վարժութիւններ	Կարողանալ կատարել մարմնա- մարզական ազատ վարժութիւն- ների հատուկ կոմպլեքսը. իմա- նալ և կատարել առավոտյան լիցքային վարժութիւններ

№ նորմաները	13—14 տարեկան	15—16 տարեկան
11. Ֆիզիկա-կազմակերպչական ունակություններ	Տրված առաջադրանքի համաձայն, անցկացնել ֆիզ. վարժությունները մեկական ձև, որինակ՝ ցատկումներ, նետում, մաղցում, ազատ շարժումներ և այլն. սպորտ խաղերից վորեկ մեկն լմանալ, խաղալ և դատել (վալերոլ, քարադկի):	Կարողանալ դատավարել, թեթևատեղիկայի առանձին ձևերը՝ վազը, ցատկումներ, նետում, կարողանալ խաղալ և դատել յերկու խաղ լրասկետբոլ, ֆուտբոլ, տենիս, ջրագնդակ(վալերոլ):
12. Լոգ	Լոգալ 25 մետր Տղաները՝ 25 վայրկյան Աղջիկները՝ 30 վայրկյան Գլխավոր մտնել ջուրը 1 մետր բարձրություն ունեցող ստարտի կամրջից: Պահվել ջրի յերեսին 6 րոպե:	Լոգալ 50 մետր Տղաները՝ 45 վայրկյան Աղջիկները՝ 50 վայրկյան Լոգալ ձեռքի նռնակով՝ առանց սահմանված ժամկետի Տղաները՝ 50 մետր, Աղջիկները՝ 25 մետր: Պահվել ջրի յերեսին 10 րոպե:

ՊԱՊ 2-րդ աստիճանի կոմպլեքսում միավորվում են ավելի քան դժվար ձևեր: Սպորտ տեխնիկայի ցուցանիշների կատարման տեսակետից 1-ին կոմպլեքսը կազմված է ավելի քան մատչելի, վորովհետև այդ կոմպլեքսը լայն մասսաներ պետք է ընդգրկի:

2-րդ կոմպլեքսն այդպես չէ. կատարման տեսակետից այն ավելի քան դժվար է, և հարկավոր է սխտեմատիկ մարզվել, վերպեսզի 2-րդ կոմպլեքսի նորմաներից քննություն տրվի: Սակայն 2-րդ կոմպլեքսն առայժմ ֆիզիկալոր հրամկազմի դարձնոցն է հանդիսանում: 2-րդ կոմպլեքսը տեխնիկապես բարձրորակ սպորտ վարպետներ է տալիս մեզ: Սակայն այս չի ասում, թե լայն մասսաները չեն կարող ընդգրկվել 2-րդ կոմպլեքսի մեջ: Յերբ մեր լայն մասսաներն 1-ին կոմպլեքսի նորմաներից քննություն տան, այն ժամանակ նրանք պատրաստ կլինեն 2-րդ կոմպլեքսի նորմաներից քննություն տալու:

Ահա և 2-րդ կոմպլեքսի նորմաների տախտակը:

«ՊԱՊ» 2-րդ կոմպլեքսի նորմաներից քննիթցոն ՏԱԼԸ
ԸՍՏ ՏԱՐԻՔԻ

№	Վննությունը	Տ Ա Ր Ի Ք					
		Տղամարդիկ			Կ ա ն յ ք		
		17—25	26—35	36—ից բարձր	16—25	26—35	36—ից բարձր
1	Վազը հրացանով 60 մետր	12 վ.	13—	14—	14—	15—	16—
2	Կրոսս 5—1 կմ	21 ր.	22—	24—	4—	4—30	5—
3	Ռազմական ամրության հաղթահարում 400—200 մետր	2-20 վ.	2-30 ր.	2-40	55—	60—	65—
4	Ռազմականացված արշավ 35—25 կիլոմետր	8—	8—	8—	6—	6—	6—
5	Ցատկում բարձրություն վազելով	1 40 սմ	130 ս.	125 ս.	115 ս.	110 ս.	105 ս.
6	Նռնակի նետում միջանցքում	40 մ.	37	35	—	—	—
7	Լոգ 400—200 մետր	10 ր.	11	12	6 ր.	6-30	7
8	Ցատկում ջրի մեջ՝ գլուխն առաջ	5 մ.	5	3	3	3	2
9	Խեղդվողին ազատելու դործ-նական դիտելիքներ	Պարտադիր է բոլորի համար					
10	Սուզվել տաքածություն	15 մ.	13 մ.	12 մ.	13 մ.	12 մ.	10
11	Թիավարում 2—1 կմ	Ժամանակը սահմանում է տեղի Ֆ.Կ.Պ.					
12	Վելո-կրոսս 20—10 կմ	1 ժամ	1-10	1-20	40 ր.	43	45
ա.	Մոտորով կամ արակտորով ճանապարհորդելու թուլյալություն	Փոխարինում է վելո-կրոսսին					
13	Դահուկներ 20—5 կմ	2-10	2-15	2-20	36	38	40
ա.	Դահուկին արշավ 50—25 կմ	—	8	8	6	6	6
14	Ցատկում դահուկներով՝ արամպլիներից	8	8	8	—	—	—
15	Սպորտ խաղերին մասնակցելը խաղերի տնունները	Պարտադիր է բոլորի համար					
16	Ինքնապաշտպանության ձևերը (տեսակները)	Պարտադիր է բոլորին Ազատվում են բռնելու ձևերից					
17	Մարմնամարզական ազատ վարժություններ	Պարտադիր է բոլորի համար					
ա.	Մաղցում պարանի վրա	4-50 մ.	4-50 մ.	4-50 մ.	—	—	—
բ.	Ցատկում ամուր արգելակի վրայից	1-20 ս.	110 ս.	110 ս.	—	—	—
գ.	Պտտաձող	Под'ем	вскрощ кой	—	—	—	—
դ.	Վարժություններ վորովայնային միաններին համար	—	—	—	5	4	3
ե.	Վարժություն. դուգափայտի վրա	—	—	—	—	—	—

ԳՆՈՒՅՈՒՄԱՆ ԱՆՎԵՐ	ՔՆՆՈՒՅՈՒՄԱՆ ԱՆՎԵՐ	Տ Ա Ր Ի Ք						
		Տղամարդիկ			Կ ա ն ա յ ք			
		17-25	26-35	36-45 բարձր	16-25	26-32	33-45 բարձր	
17.	Գլխահագնի տակ դեպի առաջ, ներքնակի վրա	—	—	—	4	3	2	
18.	Լիցքեր և ֆիզկուլտուրական անցկացնել իմանալը	Պ ա ռ տ ա գ ի ռ	ե	բ ո լ ո Ր ի	հ	ա	մ	ա
19.	Հրաձգություն	»	»	»	»	»	»	
20.	Կրտսեր բուժտեսիսիկների դասընթացն ու ռադիոգիտություն իմանալը	»	»	»	»	»	»	
21.	Կարողանալ դրույց անցկացնել ֆիզկուլտուրական և ԿՍԻ մասին	»	»	»	»	»	»	
22.	Պատրաստել 10 խմբակավար և նրանց ոգնականներ	»	»	»	»	»	»	
23.	Սանիտարական գիտելիքներ	»	»	»	»	»	»	
	1. _____							
	2. _____							
	3. _____							
24.	Պարզեատրում հարվածայնության ոտաժի, գլուտարարություն	Պ ա ռ տ ա գ ի ռ	ե	բ ո լ ո Ր ի	հ	ա	մ	ա

Սորհրդային ֆիզկուլտուրայի սիստեմը ճշտությամբ լուծում է խորհրդային սպորտի զարգացման խնդիրները՝ որստորե մարզելով լավագույն սպորտսմեններ, ձեռք բերելով նորանոր ռեկորդներ:

Միանգամայն պարզ է, վոր նորմաներից ինչքան շատ մարդ քննություն տա, ֆիզկուլտուրայի շարքերն ինչքան մեծանան, մեր հաջողություններն այնքան կամրանան, և մենք յերկրին այնքան ավելի շատ ռեկորդ կտանք, ինչպես այս կարճ ժամանակամիջոցում կատարեցինք այդ:


ՍԱՎԱԼԵՆՔ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ

Կոլխոզային կարգի հաղթանակը գյուղում ապահովեց նաև ֆիզկուլտուրայի լայն ծավալման համար անհրաժեշտ նախադրյալներ: Ամենուրեք կազմակերպվող ժողովուրդի շրջանում:

տեսությունները գյուղում կայուն ֆիզկուլտ խմբակներ ունենալու հող ստեղծեցին:

Կոլխոստեսական ֆիզկուլտ-խմբակներ կազմակերպելու համար Համամիութենական ֆիզկուլտուրայի Գերագույն Սորհուրդը յերկու տարի շարունակ ֆիզկուլտուրայի գյուղարշավներ կազմակերպեց, վորի ընթացքում Հայաստանի ֆիզկուլտ-կազմակերպությունը վորոշ հաջողություններ ձեռք բերեց:

Սակայն պետք է ասել, վոր մեր տեղական ֆիզկուլտ-խորհուրդներն առանց հաշվի առնելու այդ խմբակների տնտեսական ու կազմակերպական ամրապնդումը, նրա հնարավորությունները, ֆիզկուլտ-հրահանգչական կազմը և այլն՝ թվերի հետևից ընկան և մի շարք տեղերում ֆիզկուլտ խմբակներ կազմակերպեցին, վորոնք յերկար կյանք չունեցան: Այս գործում լրիվ ոգնություն չեկան նաև քաղաքի շեֆխմբակները: Նրանք գյուղ ելին գնում միայն այն ժամանակ, յերբ հատուկ կամպանիա յեր անցկացվում: Նույնիսկ ներկայումս ել քաղաքի շեֆխմբակները լրիվ ոգնություն չեն հասցնում գյուղֆիզկուլտ խմբակներին: Գյուղական ֆիզկուլտ խմբակի լավագույն ավելիքներն չեն հրավիրում քաղաք՝ իրենց վորձը նրանց համար, և այլն: Անդրյերկրկումի 1932 թ. վորոշումը՝ քաղաքական ֆիզկուլտ-աշխատանքների



Նկ. 3. Կոլսնեստուկի ֆիզկուլսուրնիկը
նունակ ցեսելիս (Ագիգբեկովի օրդան)

վերաբերյալ՝ ասում ե, վոր Անդրկովկասյան ֆիզկուլտ-կազմակերպության մեջ միայն Հայաստանի գյուղական ֆիզկուլտ-աշխատանքներում ե վորոշ տեղաշարժ նկատվում:

Անդրյերկրումի վորոշումը՝ գյուղում ֆիզկուլտուրան իր բարձրության վրա դնելու մասին՝ հանդիսացավ Հայաստանի ֆիզկուլտ-կազմակերպության ծրագրերը: Հայկումկուսի Կենտկոմի անմիջական ղեկավարությամբ և Կոմյերիտմիության անմիջական ոժանդակությամբ Հայաստանի ֆիզկուլտ-կազմակերպությունը ձեռնամուխ յեղավ այդ ծրագրի իրականացման գործին: Առաջին հերթին ապահովվեց մեծ կոլտնտեսություններում, խորհրտնտեսություններում և ՄՏԿ-ներում ֆիզկուլտ-խմբակների ստեղծումն ու նրանց ամրապլնդումը: Ձեռք բերվեցին ֆիզկուլտ խմբակների համար գործիքներ, հրապարակներ և, վորոշ չափով՝ ֆիզկուլտ հրահանգիչներ:



Նկ. 4. Վազգ

Այս միջոցառումները նպաստեցին սպորտի աճմանը գյուղում: 1934 թ. ընթացքում միջխմբակային, միջըջանային և հանրապետական մի շարք կարևոր նշանակություն ունեցող մրցումների թիվը հասավ 135-ի:

Աշխուժություն մտցրեց գյուղական ֆիզկուլտ-աշխատանքների մեջ 1933 թ. համահայաստանյան առաջին սպարտակիադան: Տեղերում սպորտմրցումներ կազմակերպվեցին և համահայաստանյան սպարտակիադային մասնակցելու համար լավագույն սպորտսմեններ ընտրվեցին: Հայաստանյան սպարտակիադային (չհաշված շրջանային հավաքական խմբերը) հատուկ ծրագրով մասնակցում էին լավագույն

ՄՏԿ-ներ, խորհրտնտեսություններ, կոլտնտեսական ֆիլխմբակներ, վորտեղ առաջնությունը շահեց խորհրտնտեսությունների գծով՝ 1-ին խորհրտնտեսությունը, իսկ ՄՏԿ-ների ֆիլխմբակների գծով՝ Հոկտեմբերյան ՄՏԿ-ի ֆիլխմբակը:

Մենք կարող ենք գոհունակությամբ արձանագրել, վոր Միության մասշտաբով, լավագույն կոլտնտեսական սպորտսմենների ցուցակում տեղ են գտել Հայաստանի 12 սպորտսմեն կոլտնտեսական: Սակայն այդ հաջողություններն ի մի բերելով — յերբ համեմատության ենք դնում



Նկ. 5. Կիրովականի մի խումբ ֆիզկուլտուրնի բանվորուհի

մեր կատարած աշխատանքը գյուղում և քաղաքում — տեսնում ենք, վոր գյուղում դեռևս չի կատարված այն անհրաժեշտ աշխատանքը, վորով պետք ե ապահովի սոցիալիստական գյուղի աշխատավորության ֆիզիկական կուլտուրայի անհրաժեշտ պահանջը:

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՖԿ ԽՄԲԱԿԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ՄՏԿ-ՈՒՄ

Ֆիզկուլտ-կազմակերպության ստորին ողակը՝ նրա հիմքը՝ հանդիսանում է ֆիզկուլտուրայի խմբակը: Ֆիզկուլտ-կազմակերպության աշխատանքների հաջող կազմակերպումը, աշխատավորության ֆիզկուլտ-դաստիարակության ամբողջ բախտը վճռվում է ներքևում՝ ֆկ խմբակում: Ուրեմն, մենք պետք է ստեղծենք կազմակերպականորեն ամուր, որինակելի ֆիզկուլտ-խմբակ: Շատերին թվում է, թե խմբակ կազմակերպելը շատ հեշտ է, և այդ հավատով գնում են գյուղ՝ կուտնտեսություն, խորհրդանտեսություն, ՄՏԿ, այնտեղ ժողովներ են հրավիրում, ֆիզկուլտուրայի նշանակության մասին են խոսում, մի քանի յերիտասարդ են հավաքում, նրանց ցուցակազրույց և ամեն ինչ վերջացած համարում՝ կարծելով, թե ֆիզկուլտ-խմբակն արդեն կազմակերպված է: Այս ձևը չափազանց վտանգավոր է:

Վարպետի կուտնտեսությունում, խորհրդանտեսությունում և ՄՏԿ-ում ֆկ խմբակ կազմակերպվի, անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

1. ուսումնասիրել տվյալ կուտնտեսության (գյուղի), ՄՏԿ-ի, խորհրդանտեսության բնական պայմաններն ու հնարավորությունները՝ որինակ՝ գյուղն ի՞նչ աշխարհագրական դիրք ունի—լեռնային է, թե՞ հարթ, կլիման տա՞ք է, թե՞ ցուրտ, տեղում ջրային վայրեր կան, թե՞ վոչ, անտառային է, թե՞ վոչ, տվյալ վայրի գյուղացիությունն ի՞նչ զբաղմունք ունի, և այլն: Ի՞նչ անհրաժեշտություն ունի այս: Այն, վոր բնորոշվի, թե կազմակերպվող խմբակն ի՞նչ ուղղություն պետք է ունենա, սպորտի ի՞նչ ձևերով կարող է պարապել, ի՞նչ չափով նրանք կարող են այդ բնական պայմաններն ոգտագործել.

2. պետք է ուսումնասիրել գյուղի սովորությունները,

նրանց կենցաղը, կուլտուրական զարգացման աստիճանը: Այս անհրաժեշտ է, վոր հետագայում կազմակերպվող խմբակն իր աշխատանքի ընթացքում կարողանա պայքարել գյուղի հին սովորությունների, հին կենցաղի և անկուլտուրականության դեմ.

3. հաշվի պետք է առնել յերկսեռ յերիտասարդու-




Նկ. 6. Վաղայտի «Անասված» կոյսնեստություն ֆիզկուլտուրիկները բոխի փոսի տուռ

թյան տոկոսը՝ տվյալ գյուղում, կուտնտեսությունում, խորհրդանտեսությունում և ՄՏԿ-ում՝ ապահովելու համար նրանց ընդգրկումը կազմակերպվող խմբակի մեջ.

4. վերը հիշված յերեք ուսումնասիրությունից հետո, յերբ արդեն լրիվ պատկեր են կազմում տվյալ կուտնտեսության, ՄՏԿ-ի կամ խորհրդանտեսության բնական դրու-

թյան, կենցաղի, կուլտուրայինության և յերիտասարդու-
թյան մասին, անհրաժեշտ է արդեն ազիտացիա և բացա-
տրական աշխատանք կատարել գյուղ-աշխատավորու-
թյան և, առաջին հերթին, յերիտասարդության մեջ Ազիտացիան
կատարվում է տեղական կոմյեքիտական կազմակերպու-
թյան ոժանդակությամբ, հրավիրվում է տեղի կոմյեքիտա-
կան կազմակերպության և յերիտասարդության ընդհանուր
ժողով (ցանկալի յե այդ ժողովները հրավիրել բացօթյա՝



Նկ. 7. Մի խումբ հեծանվորդ

դաշտում, յեթե այդ հնարավոր է), ղեկուցում են տալիս
Ֆիզկուլտուրայի նշանակության մասին և կատարում ցու-
ցակազմում՝ ֆիլ խմբակ կազմակերպելու համար: Տեղի կոմ-
սոմոն աշխատանքը նախորդ անգամ պետք է կազմակեր-
պի, վոր ցուցակազմողներին առաջավորը կոմյեքիտական-
ները լինեն: Ժողովից հետո, ինչպես ասացինք, յեթե բա-
ցօթյա յե, ցանկալի յե կազմակերպել տեղական մասսայա-

կան խաղեր, կուլտուրական այլ զվարճալիքներ, պարեր և
այլն.

5. ցուցակազմումը կատարելուց հետո անհրաժեշտ է
մտածել խմբակի պահանջներին՝ գործիքներ ձեռք բերելու,
պարամպունքի վայր ընտրելու մասին, և այլն: Նույն ժամա-
նակում, կամ հետևյալ որը, մասնակցողների ընդհանուր ժո-
ղով պետք է հրավիրել (յեթե հնարավոր է՝ կրկին բացօ-
թյա), խմբակի հերթական անելիքների մասին ինֆորմացիա
տալ: ինֆորմացիան պետք է տա շրջֆիզկուլտ. խորհրդի
ներկայացուցիչը կամ շեֆ-խմբակի բերգադի անգամներից
մեկը: Նույն ժողովում մշակվում են պարամպունքի որերը
և ընտրվում է խմբակի բյուրո: Բյուրոն ընտրվում է իր նա-
խագահը և քարտուղարը: պետք է աշխատել բյուրոյի համար
լավագույն ակտիվ ընկերների ընտրել (բյուրոյի նախագահն
անպայմանորեն կոմյեքիտական պետք է լինի): խմբակը
հանձնարարում է բյուրոյին՝ կազմել աշխատանքի ծրագիր,
վորը հաստատվում է խմբակի ընդհանուր ժողովում: Յեթե
խմբակը բաղկացած է մինչև 20 հոգուց, բյուրոն պետք է
ընտրել 3 անդամից, իսկ յեթե քսանից բարձր է՝ 5 ան-
դամից: Բյուրոն ամեն 6 որակում մեկ անգամ նիստ պետք
է հրավիրել և ըննության առնի խմբակի հերթական խըն-
դիրները, իսկ խմբակը պետք է նիստեր ունենա 20 որը
մեկ անգամ:

ՅԿ ԲՅՈՒՐՈՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳԻՐԸ

1. Բյուրոյի ծրագրի կատարման ընթացքը և առան-
ձին ընկերներին տրված հանձնարարությունների կատար-
ման ստուգումը:

2. «ՊԱՊ» կրճառչանի պլանի բաշխումն ըստ ա-
միսների, այդ պլանի կատարման ընթացքն ու հաշվա-
ռումը:

3. սպորտ-մրցումներ, յեւլայթներ, յերթերի և այլ ծրագրեր կազմելն ու անցկացնելը.

4. նոր անդամների ընդունումը.

5. ակտիվի պատրաստումն ու հաշվառումը.

6. ֆիզկուլտ-խմբակի տնտեսական միջոցների հայթայթումն ու ծախսումը.

7. ֆիզկուլտ-խմբակի մասնակցութեան ապահովումը՝ գյուղի և իրենց անմիջական արտադրութեան նկատմամբ կատարվող կամպանիաներին, ցույցերին, յերթերին և այլն (գարնանացան, բերքահավաք, տոնակատարութիւններ, զորակոչ և այլն).

8. շաբաթորյակների կազմակերպում՝ ֆիզկուլտ-միութենաների համար հնարավորութիւնն ստեղծելու (գաշտ, թուիչքի փոսեր, վազքի ճանապարհներ և այլն).

9. շեֆարկյալ ֆիզխմբակին ոժտակութեամբ զարկ տալը.

10. ձեռնարկումներ՝ շրջֆիզկուլտ խորհուրդների վերջնականութեան կատարման համար:

Ինչ խոսք, վոր, բացի հիշյալ հիմնական հարցերից, բոլորն կարող ե քննել նաև այլ բնույթ կրող ու կարևոր խնդիրներ:

ՈՎ Ե ՂԵԿԱՎԱՐՈՒՄ ՖԻԶԿՈՒԼՏ-ԽՄԲԱԿԻ

Կուսնտեսական ֆիզխմբակներն անմիջապէս ղեկավարվում են կուսնտնտեսութիւնների կողմից, իսկ ՄՏԿ և խորհրտնտեսական խմբակները ղեկավարվում են տեղի պրոֆմիութեան տեղկոմի, բանկոմի կողմից, վոր և ամբողջութեամբ պատասխանատու յեն գոյութիւն ունեցող խմբակի ամբողջ գործունեութեան համար: Ֆիզխմբակի բոլորները հիշյալ տնտեսութիւնների նախագահութիւններին պետք ե պահանջեն առնվազն ամիսը մեկ անգամ իրենց ղեկավարները լսել:

Գյուղական ֆիզկուլտ խմբակները (կուսնտեսական, ՄՏԿ, խորհրտ.) ֆիզկուլտութեան բոլոր խնդիրներում ղեկավարութիւնն ստանում են շրջանային ֆիզկուլտ-խորհրդից և ամբողջութեամբ յենթակա յեն նրան, անհրաժեշտ կազմակերպական ու մեթոդական ցուցումներ են տալիս: Ֆիզկուլտ-շրջանային խորհրդի վերջնականութեամբ խմբակների համար համարվում են վերջնական և կարող են բողոքարկել միայն ֆիզկուլտ-Գերագոյն Խորհրդին՝ սպասելով նրա վերջնական վճիռը:

ՖԻԶԿՈՒԼՏ-ԽՄԲԱԿԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋՈՅՆԵՐԸ

Ֆիզկուլտ-խմբակների տնտեսական միջոցները կուսնտնտեսութիւններում հոգում են կուսնտնտեսութիւնները: Խորհրտնտեսութիւնների և ՄՏԿ-ների ֆիզխմբակի տնտեսական միջոցներն անմիջականորեն հոգում են այդ տնտեսութիւնների տեղկոմները:

Ֆիզկուլտ խմբակներն իրենց բոլորն ամրապնդելու համար կարող են նաև փակ մրցումներ ու ֆիզիկայից կամ մարզահանդեսներ կազմակերպել:

ՖԻԶԿՈՒԼՏ-ԽՄԲԱԿԻ ԶԵՎԸ

Ֆիզկուլտ-խմբակն իրավունք ունի և պետք ե ունենա իր դրոշակը, իր հատուկ ֆիզզգեստն ու կրծքի նշանը, վոր և հաստատվում ե կուսնտնտեսութեան, ՄՏԿ-ի, կամ խորհրտնտեսութեան բանկոմների կողմից: Ֆիզխմբակին չի թույլատրվում թե հատուկ կնիք կրող բլանկ և թե դրամարկի պահել:

ՖԻԶԿՈՒԼՏ-ՇՐԱՀԱՆԳՁԻ ՎԱՐՁԱՏՐՈՒՄԸ

Շնորհիվ կուսնտնտեսութիւնների, ՄՏԿ-ների և խորհրտնտեսութիւնների տնտեսական ամրապնդման, ֆիզկուլտ-Գերագոյն Խորհուրդն ու տեղական խորհուրդները մի

շարք պահանջներ են ստանում՝ հրահանգիչներով բավարարելու համար, վոր, ըստ հնարավորության, բավարարվում են, բայց թե ֆիզիկոսներ այն պահանջը մեր գյուղում այնքան ե աճել, վոր ֆիզիկոսներ այն գեղավար մարմիններին հնարավորություն չի տրվում հրահանգչակապի կադրերով բավարարել նրանց: Այս պահանջը մեղմելու համար, մեր կոլտնտեսական, խորհրտնտեսական և ՄՏԿ խմբակները պետք ե, վորպես հրահանգիչ, ոգտագործեն Կարմիր բանակից զորացրված ակտիվ ընկերներին, կամ իրենց շարքերում յեղած ակտիվը: Նրանք կարող են նաև իրենց շեֆերի միջոցով իրենց խմբակի լավագույն անդամներին 10—15 որով քաղաք ուղարկել և վերապատրաստման յենթարկել:

Վորպեսզի կոլտնտեսական ֆիզ հրահանգիչը շահագործված լինի և պատասխանատվություն զգա (վոր հասարակական կարգով ե աշխատում), Հողօրդկումատը հատուկ հրահանգով գիմել ե շրջանային հողբաժիններին՝ ֆիզ խմբակում կատարվող աշխատանքի համար վերոհիշյալ հրահանգիչներին վարձատրել: այս ուղղությամբ պետք ե աշխատեն մեր բոլոր կոլտնտեսական ֆիզ խմբակներն ու կոլտնտվարչություն միջոցով լուծեն ֆիզ հրահանգչի վարձատրման հարցը:

ՍԱՎԱԼԵՆԲ ԳՅՈՒՂԻ ՍՊՈՐՏ-ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սպորտի զարգացումը պայմանավորվում ե սպորտ-շինարարությունով: Վորքան շատ լինի սպորտի շինարարությունը, այնքան ավելի կուժեղանա սպորտիվ տեխնիկական հաջողությունների ձեռք բերումը: Ուրեմն, գլխավոր ուղադրությունը պետք ե լարել սպորտ շինարարության վրա:

Մեր կոլտնտեսային լայնածավալ դաշտերում, գյուղերում ու շրջ. կենտրոններում այդ հնարավորությունները կան և պետք ե ստեղծել:

Շինարարությունը կարելի յե կատարել յերկու միջոցով. առաջին՝ այն, վոր մեր ֆիզ խմբակները պլանավորվող գյուղի ընդհանուր նախագծերի մեջ պետք ե մտցնեն սպորտ-շինարարության հիմնական կառուցումները (ֆուտբոլի հրապարակ, վ/բ., պ/բ., թեթև ատլետիկայի, լողարան, ֆիզ դահլիճ և այլն), վոր կառուցվելու յե տեղական բյուջեյով՝ գյուղխորհրդի, կոլտնտեսական, խորհրտնտեսական և ՄՏԿ վարչությունների անմիջական ֆինանսավորումով:


Սակայն կարելի յե և այդ հնարավորությունների մի մասն ստեղծել իրեն՝ տեղի ֆիզ խմբակի և յերիտասարդության միջոցով՝ կատարելով շատ չնչին ծախսեր:

Ինչպես կարելի յե այդ անել: Հասարակական շաբաթոյակների միջոցով պետք ե անել այդ: Նման ձևով հնարավոր ե հարթ տարածություններում (իսկ այդպիսի տարածություններ չառ կան) կառուցել որինակելի վալեյբոլի և բասկետբոլի հրապարակներ, թոխչքի փոսեք, թեթև ատլետիկայի հարմարություններ և այլն: Նման փորձեր մեր կազմակերպություններում քիչ չեն: Ալլանվերդու ֆիզ խմբակի և հանքկոմի ձեռներեցությամբ այժմ լեռներում կառուցվում են ֆիզ հրապարակներ, վազքի ճանապարհներ: «Անաստված» կոլտնտեսություն իր կազմակերպության համար ֆուտբոլի հրապարակ ե կառուցել և այլն:

Այսպես պետք ե անեն մեր ֆիզ խմբակները կոլտնտեսություններում՝ ապահովելու համար խմբակի կարիքները: Այս բոլոր տեղական հնարավորությունները ֆիզիկոսներին սպորտի ավելի բարձր ձևերին հասնելու նախապատրաստության լավագույն միջոցն են հանդիսանում:

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՏԵՂԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Մեր բազմազգի գյուղը, վորտեղ քիչ չեն սպորտի այս կամ այն ձևի տարրերը, չափազանց հարուստ ե իր սե-



Նկ. 8. Ըմբռնություն (տառու կոխ)

փական խաղերով ու պարերով, վորոնք շատ են հետաքրքրում մեր գյուղի յերիտասարդությանը:

Որինակ՝ ուշադեմը (յերեք քայլից ցատկում). այս խաղը գործածական է Հայաստանի բոլոր գյուղերում: Այս խաղի վորոշ ելեմենտներ մենք հաճախ մտցնում ենք թեթև առեամբցումների մեջ և գյուղերում լավագույն ցատկույններ ունենք: Պարսխաղը, վոր նշանաւման լավագույն ձևերից է, և մարդիկ կարող են այս ձևը գործադրելով ձեռք բերել մոտավոր նշանաւության փորձ (վոշ հրաձգության ձևով): Ձիարշավ (չբիլ). այս ձևը հնում տարածված էր հատկապես տոների ժամանակ: Այս գործով մեծ մասամբ զբաղվում էր կալվածատիրոջ և կուլակի տղան, վոր լավ ձի ուներ: Բայց չէ՞ վոր այժմ մեր կոլանտեսություններն ամեն տեսակ հնարավորություններ ունեն իրենց լավագույն ձիերն ունենալու:

Ռուսաստանում այս գործով շատ են զբաղվում, իսկ մեզ մոտ միանգամայն աչքաթող է արված, չնայած մեր մի շարք կոլանտեսություններում և հատկապես ձիաբուծական խորհանտեսություններում հնարավոր է այն կազմակերպել. յերկրի պաշտպանությունն ամրացնելու գործում այդ մեծ նշանակություն ունի:

Գյուղական աշխուժ խաղերից է նաև բերդ խաղը (բըռ): Այս խաղին մասնակցողներին թիֆն անսահմանափակ է. հավասար թվով մարդկանց յերկու խումբ է կազմվում — մի խումբը լինում է բերդ պահպանողը, իսկ մյուս խումբն աշխատում է, առանց բերդապահ խմբի վորևե անդամի հանդիպելու, գնալ և բերդը գրավել: Այս խաղը շարունակ վազքով է կատարվում, այսինքն՝ շարժում է պահանջում: Այս տիպի խաղերի շարքն է զատվում նաև «Ղազախթուփ» դրոշակախաղը և այլն:

Բացի վերը հիշատակված խաղերից, հնարավոր է և պետք է անպայմանորեն գործածության մեջ դնել տեղա-

կան խմբական, անհատական ու յերկսեռ պարերը, վորտեղ կան նաև մրցման սկզբունքներ: Չափազանց հետաքրքիր է նաև Լոուու գլուխը (կոխ), վոր ըմբշամարտի մեջ իր արժանի տեղն է գրավում: Այս, իհարկե, բոլորը չի, ոգտավետու է հետաքրքիր ձևեր շատ կան:

Ֆիզիկուլտ խմբակները—աշխատավորության ֆիզիկատիարակման հիմքում ունենալով խորհրդային ֆիզիկուլտուրայի հիմնական սկզբունքները («ՊԱՊ»-ի կոմպլեքսներ, գիտական սպորտի ձևեր և այլն)՝ միաժամանակ պետք է ձեռնարկեն սպորտի տեղական ձևերի ուսուսման սիրումն ու նրանց քննադատական ոգտագործումը՝ հոգուտ մեր սպորտի ել ավելի զարգացման:

ՖԻԶԿՈՒԼՏ-ԽՄԲԱԿՆ ՈՒ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Չպետք է կարծել, թե ֆիզիկուլտ-խմբակի աշխատանքները սահմանափակվում են միայն մարմնամարզությամբ և սպորտ պարապմունքով: Ընդհակառակն՝ ծավալելով յերիտասարդության ֆիզիկական պատրաստման գործը՝ ֆիզիկուլտ-խմբակը միաժամանակ պետք է պայքարի մասսաների կուլտուրական դաստիարակման առաջավոր դիրքերում: Սպորտմիջոցառումները չեն խանգարի, որինակ՝ յեթե ֆկ խմբակը եքսկուրսիաներ, ֆկ յելույթներ, կոմյերիտականների հետ մեկտեղ կլինոյի կամ թատրոնի կոլեկտիվ դիտումներ կազմակերպի, անգրագիտության վերացման համար և հին կենցաղի ու կրոնական այլանդակ սովորությունների դեմ պայքար մղի:

Անհրաժեշտ է խմբակի անդամների մեջ ամրացնել որվա կուլտուրական ռեժիմը, այսինքն՝ ժամանակին դարձնել, լվացվել, ձաշել, կարդալ և այլն: Այս անհրաժեշտ է, վորովհետև մարդու ռեժիմն իր մեջ հաստատակամություն, վճռականություն և առաջացնում, ոժանդակում է արտա-

դրողականության բարձրացմանն ու մարմնի առողջացմանը:


Մյուս խնդիրը ֆիզիկուլտուրնիկներին վայել կերպով զգեստավորելն է: Վոմանք կարծում են, թե հագնվելը կուլտուրականության հետ կապ չունի, ով ինչպես և ինչ թափթրիված ձևով ուզենա, կհագնվի: Այս դիտողությունն անշուշտ սխալ է: Բոլորս ել հագուստ ենք հագնում, բայց մեկս այլ կերպ է հագնում, մյուսը՝ այլ: Սյապես, որինակ՝ մարդիկ կան, վոր համեստ զգեստ ունեն, բայց անձոռնի ձևով են հագնում. այն հագուստի վրա, վոր գոտի պետք է կապեն, չեն կապում, և այլն:

Յերիտասարդության վորոշ խավի մեջ տարածված է խուլիգանական վարքն ու հայհոյանքը: Այս բոլորը, անշուշտ, ամբողջությամբ անդրադառնում է անհատի դաստիարակության վրա և մասսաների մեջ իր բացասական ազդեցությունն է թողնում:

Ահա թե ինչու ֆիզիկուլտուրայի խմբակը կուլտուրատությունում ու գյուղում լուրջ պայքար պետք է ծավալի՝ յերիտասարդության միջից անկուլտուրականությունը վերացնելու, և նրանց սովորեցնի մեր ժամանակի յերիտասարդությանը վայել վարքագիծ ունենալ:

Պայքարն աշխատանքի սոցիալիստական մեթոդների համար պետք է լինի մեր գյուղի վողջ ֆիզիկուլտ-կազմակերպությունների պատվի գործը: Ֆիզիկուլտուրնիկն ամենուրեք իր որինակելի աշխատանքով պետք է լինի լավագույն հարվածայինների շարքերում և մյուսներին իր հետևից տանի:

Վորպեսզի ֆիզիկուլտուրնիկը կարողանա այս բոլորը կատարել, առաջին հերթին նա ինքը պետք է լինի դասակարգայնորեն գիտակից, առաջավոր ու կուլտուրական քաղաքացի: Ֆիզիկուլտ-խմբակի վողջ աշխատանքների հաջողության առաջին նախապայմանը դիսցիպլինայի ամրապնդումն է:



Նկ. 9. Ֆիզկուլտուրիստները բաժնեբաժնի խաղալիս

Ֆիզկուլտուրնիկն իր և ուրիշների մեջ պետք է արմատացնի այն միտքը, վոր առանց ամուր, գիտակցական դիսցիպլինայի, ֆիզկուլտ-աշխատանքի լավ դրվածքի մասին վոչ մի խոսք չի կարող լինել:

Ֆիզկուլտուրան պայքարում է ինտերնացիոնալ ու ՆՅՆ-ի յեղբայրական ժողովուրդների կապի ամրացման համար: Մեր յեղբայրական հանրապետութայունների ու արտասահմանյան սպորտ կազմակերպութայունների բոլոր տեսակի սպորտ հանդիպումներն այժմ հաճախակի յեն դարձել, վորի ժամանակ փորձերի փոխանակութայուն և ինտերնացիոնալ կապ է ստեղծվում:

Ինտերնացիոնալ կապի ամրացման համար մեր տեղական ֆիզկուլտուրայի խմբակները հարատև ու կոնկրետ աշխատանք պետք է կատարեն: Զպետք է մոռանալ, վոր դասակարգային թշնամին այստեղ ևս փորձ կանի իր թույնով վարակել առանձին ֆիզկուլտուրնիկներին՝ նրանց մեջ նացիոնալիստական տրամադրութայուններ սերմանելով (այսպիսի դեպքեր մեր ֆիզկուլտ-կազմակերպութայունները գիտեն, մանավանդ, մրցումների ժամանակ): Մեր ֆիզկուլտ-խմբակներն ամենուրեք պետք է զգոն լինեն և ժամանակին մերկացնեն դասակարգային թշնամու—կուլակի փորձերը՝ փնասելու մեր կուլեկտիվ դաստիարակման ու ինտերնացիոնալիզմի աշխատանքները:

ԶԱԽԶԱԽԵԼ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՍՊՈՐՏԻ ԲՈԼՈՐ ՌԵԿԱՐԳՆԵՐԸ

Նորհրդային սպորտը հսկա չափով առաջ է շարժվում: Մեր խնդիրն է՝ «հասնել կապիտալիստական սպորտի բոլոր ռեկորդներին և առաջ անցնել»: Այս լոզունգի իրականացման համար է, վոր այսօր խորհրդային ֆիզկուլտուրնիկները պայքարում են: Միայն 34 թ. ընթացքում Նորհրդային Միութայն սպորտսմենները ջախջախեցին բուրժուական մի շարք ռեկորդներ՝ սահմանելով համաշխարհային նոր

ռեկորդներ. այդ ռեկորդներից մեկը՝ ծանրություն բարձրաց-
նելու ասպարիզում՝ սահմանել ե Հայաստանի ֆի-
զադմակերպության անդամ՝ ղինամոյական Սարգիս Համ-
բարձումյանը:

Այս ինքնընտանքյան վկայում ե, վոր մենք այդ ուղղու-
թյամբ նվաճում ունենք: Սակայն այդ դեռ ընչ ե: Մեզ
մոտ՝ գյուղում սպորտը հետ ե մնում:

Սպորտի համար համապատասխան ուժեր մեր գյու-
ղում չատ կան, բայց նրանք մեզ անհայտ են: Մեր խմ-
բակներն այս մասին պետք ե մտածեն, ուսումնասիրեն
առանձին ֆիզկուլտուրնիկներին, թե նրանք ինչ միջոցով
կարող են լավ արդյունք ունենալ և ըստ այնմ ել նրանց
հետ պարապեն: Սպորտը մեր յերիտասարդությանն այնքան
ե հետաքրքրում, վոր նա ամեն բոպե կարող ե սպորտով պա-
րապել, միայն հարկավոր ե յերիտասարդության մեջ աշխա-
տանք կատարել, շահագրգռել նրան: Ներկայումս գյուղում
գործում են միայն վալեյբոլը, պ/բ և, վորոշ դեպքերում, շրջ-
կենտրոններում՝ ֆուտբոլը, այնինչ մենք սպորտի չափա-
զանց կարևոր ձևեր ունենք, որին աղձարմամբ զուլթյուն,
ծանրության բարձրացում, լող, թեթև ատլետիկա, դահուկ,
պարանի ձգում, սպորտի տարբեր ձևի խաղեր, վոր-
սորդություն, շախմատ, վելոսպորտ և այլն, վոր պետք ե
գործածության մեջ դրվեն գյուղ ֆիզ կազմակերպություն-
ների կողմից: Ինչ խոսք, վոր թված սպորտձևերի դար-
գացումը հնարավոր ե մեր առանձին շրջաններում և գյու-
ղերում: Սակայն այդ մասին մեր ֆիզ կազմակերպություն-
ները հոգ չեն տանում:

Որին աղձ Ախտայի շրջանում, վորտեղ Սևանա լիճն ե
գտնվում և կարելի յե լող ու թիավարություն սովորել,
մեր ֆիզ մարմիններն ուղադրություն չեն դարձնում այդ
գործին, և Ախտայի ֆիզ կազմակերպությունը մինչև հիմա
լավ թիավարող և լավ լողորդ չի տվել: Կամ թեկուզ վերց-
նենք Արթիկի և Ապարանի շրջանները: Այս շրջաններում

դահկային սպորտը կարելի յե լավ զարգացնել, սակայն
դրանցից և վոչ մեկը լավագույն դահկավորներ չունի:

Մեզ մոտ ստորին ողակում, առնաստրակ, մրցումներ
քիչ են կազմակերպվում կամ յերբեք չեն կազմակերպվում,
իսկ մենք գիտենք, վոր սպորտը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ
մրցում. առանց մրցման սպորտ-տեխնիկական նվաճում կամ
ռեկորդ չի կարող լինել, ուստի անհրաժեշտ ե, վորքան
հնարավոր ե, միջըջանային, միջխմբակային, կամ շեֆխմ-
բակների մրցում շատ կազմակերպել:

Մրցումներ կարելի յե կազմակերպել սպորտի բոլոր
ձևերով: Պետք ե աշխատել մրցումները կատարել բաց
կերպով, գյուղական աշխատավորության լայն մասնակ-
ցությամբ, վորպեսզի հնարավոր լինի նրանց ևս գրավել
ֆիզ շարքերը:

Թե խնդիրն ե՝ պայքարել համաշխարհային նոր ռե-
կորդների համար:

«Մենք պեժ ե նվաճենք աշխարհի բոլոր նոր
ռեկորդներ, մենք պեժ ե դառնանք բոլորից ուժե-
ղը, բոլորից հարպիկ ու գեղեցիկ ժիզկուլտուրնիկ-
ներն ամբողջ աշխարհում: Յեվ մենք կլինենք այդ-
պիսին՝ կուսակցության առաջնորդ, ժիզկուլտուրնիկ-
ների լավագույն բարեկամ՝ ՄԵԾ ՍՍԱԼԻՆԻ դեկա-
վառությամբ»:

Պատ. խմբագիր՝ Մ. Մարինոսյան
Լեզվական խմբագիր և սրբագրիչ՝ Գաբ. Հակոբյան

Գլավիտի լիազոր № Գ-92

Հրատ. № 214, պատվեր № 280, տիրաժ 3000

Հանձնվել է արտադրության 1935 թ. ապրիլի 30-ին
Ստորագրվել է ապագրելու 1935 թ. ապրիլի 30-ին

Ֆերեան, Դյուդերաթի տպարան, Նալբանդյան 50

ՀՀ Ազգային գրադարան



NL0308829

50 400.

253



А ПЕТРОСЯН

работы физкультуры в деревне

9292

